ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԳՀԾՁԲ-ԱԻՆ-17/18-1

ք. Երևան «22» 12 2017թ.

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Գ.Հայրապետյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լավ Ընկեր» ՍՊԸ- ն, ի դեմս տնօրեն Վ.Համբարձումյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **73 729 600** (յոթանասուներեք միլիոն յոթ հարյուր քսանինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնի **73 729 600** (յոթանասուներեք միլիոն յոթ հարյուր քսանինը հազար վեց հարյուր) չափով ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 28-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 1.1 N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն	«Լավ Ընկեր» ՍՊԸ
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8	ք. Կապան, Շահումյան 19/40
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Անելիք բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011017952	Հ/Հ11800072752900
ՀՎՀՀ 00153247	ՀՎՀՀ 09414681
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
_____ Գ. Հարությունյան	_____ Կ. Համբարձումյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 22 » 12 2017թ. կնքված
N ԳՀԾՁԲ-ԱԻՆ-17/18-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	50111130/8	Պայմանագրի Հավելված 1.1	դրամ	73 729 600	1 /Ըստ հավելված 1.1/	ՀՀ ք.Երևանի տարածքում	2018թ 1-ին եռամսյակ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011017952
ՀՎՀՀ 00153247
Աշխատակազմի ղեկավար՝

Գ. Հայրապետյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Լավ Ընկեր» ՍՊԸ
ք. Կապան, Շահումյան 19/40
«Անելիք բանկ» ՓԲԸ
Հ/Հ11800072752900
ՀՎՀՀ 09414681
Տնօրեն՝

Վ.Համբարձումյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.1

«22» 12 2017թ. կնքված

N ԳՀԾՁԲ-ԱԻՆ-17/18-1 *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

* Ծառայությունների մատուցումը 2018թ-ի 1-ին եռամսյակ

**1. Կապիտալ նորոգում անցած ագրեգատներին (շարժիչ, փոխանցման տուփ, կամրջակ) տրվում է շահագործման երաշխիքային ժամկետ՝ 1 տարի կամ 20 000 կմ, մինչև պայմաններից որևէ մեկի լրանալը, իսկ փոխված հանգույցների շահագործման երաշխիքային ժամկետը՝ 3 ամիս կամ 5000 կմ:

2. Վերանորոգման ժամանակ փոխված ագրեգատները և հանգույցները Կատարողը պարտավոր է վերադարձնել պատասխանատու ստորաբաժանմանը՝ ըստ կարգագրի:

3. Վերնորոգումներն իրականացվում են ՀՀ ԱԻՆ ԹՆԱ վարչության կողմից տրամադրված կարգագրերի և Կատարողի կողմից ներկայացված արատավորման ակտերի հիման վրա՝ ՀՀ ԱԻՆ ԹՆԱ վարչության կողմից հաստատվելուց հետո:

4. Վերանորոգման ենթակա ավտոմեքենաների քարշարկումն իրականացնում է Կատարողը՝ համապատասխան տրանսպորտային միջոցներով, ապահովելով տեղափոխման անվտանգության պայմանները: Կատարողը պարտավոր է ապահովել տեխնիկայի անվտանգությունը և պահպանումը վերանորոգման ողջ ընթացքում:

5. Վերանորոգման ողջ ընթացքում պատվիրատուի ներկայացուցիչն իրավունք ունի հետևել կատարվող աշխատանքների որակին և համապատասխանությանը՝ արտադրող գործարանի պայմաններին:

6. Կատարողը պարտավոր է ունենալ առնվազն 3 տեխսպասարկման կետ՝ հագեցված հրշեջ ավտոմեքենաների վերանորոգման համար նախատեսված տեխնիկական միջոցներով: Վերանորոգման աշխատանքները նախատեսված են միչև 4 մետր բարձրություն, 12 մետր երկարություն, 2,8 մետր լայնություն և 16000կգ քաշ ունեցող հրշեջ ավտոմեքենաների համար:

Մեքենայի անվանումը	տեխնիկական նկարագիրը	Քանակ	Միավորի գինը	Ընդամենը
Իսուզու ԱԲ-40 3,5 4X2	Անվադողերի փոխարինում - 9,00R20 առանց անվախցի, պահպանաշերտի գծանկարը՝ ունիվերսալ, կառուցվածքը՝ ռադիալ (Radial), շերտայնությունը՝ PR14, բեռնվածության ինդեքսը՝ 140/137 (2500/2300 կգ.), սահմանելի արագության ինդեքսը՝ J (100/կմ/ժ) , արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2016թ., չօգտագործված:	78	70000	5460000
	Կուտակիչ մարտկոցների փոխարինում - 6US-100Ա/ժամ անվանական ունակությամբ, չափսերը՝ երկարություն/լայնություն/բարձրություն ոչ ավել 353/175/190մմ, սառը պարպման հոսանքը ոչ պակաս EN-850A, [illegible]	26	39900	1037400

	Շարժիչի մեկնարկիչի փոխարինում 24v 4,5KW <Denso> ֆիրմայի կամ համարժեք՝ համաձայն <ISUZU Parts Catalog> 1996-2007 գործարանային տեղեկագրի և շահագործման, տեխսպասարկման ձեռնարկների:	6	195000	1170000
	Կցորդման համակարգի փոխարինում (դիսկ, պլիտա, սեղմման առանցքակալ)՝ համաձայն <ISUZU Parts Catalog> 1996-2007 գործարանային տեղեկագրի և շահագործման, տեխսպասարկման ձեռնարկների:	5	500000	2500000
	Փոխանցման տուփի կապիտալ վերանորոգում՝ համաձայն <ISUZU Parts Catalog> 1996-2007 գործարանային տեղեկագրիև շահագործման, տեխսպասարկման ձեռնարկների:	4	850000	3400000
	Արգելակման կոճղակների լրակազմի փոխարինում՝ համաձայն <ISUZU Parts Catalog> 1996-2007 գործարանային տեղեկագրի և շահագործման, տեխսպասարկման ձեռնարկների:	13	132000	1716000
	Վառելիքի Nozzle ASM կամ համարժեք ֆիրմայի մղիչների լրակազմի փոխարինում և ստենդավորում՝ համաձայն <ISUZU Parts Catalog> 1996-2007 գործարանային տեղեկագրի և շահագործման, տեխսպասարկման ձեռնարկների:	11	680000	7480000
	Իսուզու ԱԲ-40 3,5 4X2 հրջեջ ավտոմեքենայի տեխնիկական զինվածության փոխարիրնում, այդ թվում՝			
	Փողակ փականով 25մմ/ ալյումինե	26	18000	468000
	Փողրակ 25մմ/20մ. երկարությամբ՝ ներսից ռետինե հիդրոմեկուսիչ շերտով, միացման ալյումինե գլխիկներով, ոչ պակաս 16Մթ/ճնշման, 2017թ-ի արտադրության, հրդեհաշիջման համար	52	29500	1534000
	Հիդրոէլիվատոր ալյումինե	10	118000	1180000
	Ձայնային ազդանշաններ Elecrtonic siren Amplifier CS9200A կամ համարժեք ֆիրմայի /Rate valtage-24V, Rate current-10A, Inside fuse-25A/.	9	245000	2205000
Իսուզու ԱԲ-40 3,5 4X4	Անվադողերի փոխարինում - 14,00-20 անվախցով, պահպանաշերտի գծանկարը՝ բարձր անցողության, կառուցվածքը՝ դիագոնալ (Diagonal), շերտայնությունը՝ PR10, բեռնվածության ինդեքսը՝ 140 (2500 կգ.), սահմանելի արագության ինդեքսը՝ G (85, 90/կմ/ժ) , արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2016թ., չօգտագործված:	36	155000	5580000
	Կուտակիչ մարտկոցների փոխարինում - 6US-100Ա/ժամ անվանական ունակությամբ, չափերը՝ երկարություն/լայնություն/բարձրություն ոչ ավել 353/175/190մմ, սառը պարպման հոսանքը ոչ պակաս EN-850A, բևեռնականությունը՝ 0 (հակադարց), չոգտագործված:	12	39900	478800

	Շարժիչի մեկնարկիչի փոխարինում 24v 4,5KW <Denso> ֆիրմայի կամ համարժեք՝ համաձայն <ISUZU Parts Catalog> 1996-2007 գործարանային տեղեկագրի և շահագործման, տեխսպասարկման ձեռնարկներիև շահագործման, տեխսպասարկման ձեռնարկների:	2	195000	390000
	Վառելիքի Nozzle ASM կամ համարժեք ֆիրմայի մղիչների լրակազմի փոխարինում և ստենդավորում՝ համաձայն <ISUZU Parts Catalog> 1996-2007 գործարանային տեղեկագրի և շահագործման, տեխսպասարկման ձեռնարկների:	6	680000	4080000
	Պոմպի կապիտալ վերանորոգում՝ համաձայն <ISUZU Parts Catalog> 1996-2007 գործարանային տեղեկագրի և շահագործման, տեխսպասարկման ձեռնարկների:	2	820000	1640000
	Առջևի կամրջակի վերանորոգում միջառաբցքային դիֆերենցիալների փոխարինմամբ՝ համաձայն <ISUZU Parts Catalog> 1996-2007 գործարանային տեղեկագրի և շահագործման, տեխսպասարկման ձեռնարկների:	6	1320000	7920000
	Արգելակման կոճղակների լրակազմի փոխարինում՝ համաձայն <ISUZU Parts Catalog> 1996-2007 գործարանային տեղեկագրի և շահագործման, տեխսպասարկման ձեռնարկների:	5	132000	660000
	Իսուզու ԱԲ-40 3,5 4X4 հրջեջ ավտոմեքենայի տեխնիկական զինվածության փոխարիրնում, այդ թվում՝			
	Փողակ փականով 52մմ/ ալյումինե	12	18000	216000
	Փողակ փականով 25մմ/ ալյումինե	12	18000	216000
	Փողրակ 25մմ/20մ. երկարությամբ՝ ներսից ռետինե հիդրոմեկուսիչ շերտով, միացման ալյումինե գլխիկներով, ոչ պակաս 16Մթ/ճնշման, 2017թ-ի արտադրության, հրդեհաշիջման համար	30	29500	885000
	Փոխանցման գլխիկ 52մմX25մմ ալյումինե	38	11500	437000
Իսուզու ԱԲ-40 10	Անվադողերի փոխարինում - 295/80R22,5 առանց անվախցի, պահպանաշերտի գծանկարը՝ ունիվերսալ, կառուցվածքը՝ ռադիալ (Radial) և ամբողջական մետաղական (All steel), շերտայնությունը՝ PR16, բեռնվածության ինդեքսը՝ 152/148 (3550/3150 կգ.), սահմանելի արագության ինդեքսը՝ M (130/կմ/ժ) , արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2016թ., չօգտագործված:	20	148000	2960000

	Անվադողերի փոխարինում - 14,00-20 անվախցով, պահպանաշերտի գծանկարը՝ բարձր անցողության, կառուցվածքը՝ դիագոնալ (Diagonal), շերտայնությունը՝ PR10, բեռնվածության ինդեքսը՝ 140 (2500 կգ.), սահմանելի արագության ինդեքսը՝ G (85, 90/կմ/ժ) , արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2016թ., չօգտագործված:	30	155000	4650000
	Կուտակիչ մարտկոցների փոխարինում - 6US-190U/ժամ անվանական ունակությամբ, չափերը՝ երկարություն/լայնություն/բարձրություն ոչ ավել 518/240/242մմ, սառը պարպման հոսանքը ոչ պակաս EN-1150A, բևեռնականությունը՝ 3 կամ 4, չոգտագործված:	10	78000	780000
	Վառելիքի Nozzle ASM կամ համարժեք ֆիրմայի մղիչների լրակազմի փոխարինում և ստենդավորում՝ համաձայն <ISUZU Parts Catalog> 1996-2007 գործարանային տեղեկագրի և շահագործման, տեխսպասարկման ձեռնարկների:	5	680000	3400000
	Euro-2 հատկորոշման տուրբո համակարգի փոխարինում՝ համաձայն <ISUZU Parts Catalog> 1996-2007 գործարանային տեղեկագրի և շահագործման, տեխսպասարկման ձեռնարկների:	5	900000	4500000
	Արգելակման կոճղակների լրակազմի փոխարինում՝ համաձայն <ISUZU Parts Catalog> 1996-2007 գործարանային տեղեկագրի և շահագործման, տեխսպասարկման ձեռնարկների:	5	240000	1200000
	Իսուզու ԱԲ-40 10 4X4 հրջեջ ավտոմեքենայի տեխնիկական զինվածության փոխարիրնում, այդ թվում՝			
	Փողակ փականով 25մմ/ ալյումինե	12	18000	216000
	Փողրակ 25մմ/20մ. երկարությամբ՝ ներսից ռետինե հիդրոմեկուսիչ շերտով, միացման ալյումինե գլխիկներով, ոչ պակաս 16Մթ/ճնշման, 2017թ-ի արտադրության, հրդեհաշիջման համար	5	29500	147500
	Փոխանցման գլխիկ 52մմX25մմ ալյումինե	8	11500	92000
	Ձայնային ազդանշաններ Elecrtonic siren Amplifier CS9200A կամ համարժեք ֆիրմայի /Rate valtage-24V, Rate current-10A, Inside fuse-25A/.	5	245000	1225000
Իսուզու ԱԲ-40/1	Անվադողերի փոխարինում - 12,00-18 անվախցով, պահպանաշերտի գծանկարը՝ բարձր անցողության, կառուցվածքը՝ դիագոնալ (Diagonal), շերտայնությունը՝ PR8, բեռնվածության ինդեքսը՝ 129 (1850 կգ.), սահմանելի արագության ինդեքսը՝ J (100/կմ/ժ) , արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2016թ., չօգտագործված:	6	148000	888000
	Կուտակիչ մարտկոցների փոխարինում - 6US-75U/ժամ անվանական ունակությամբ, չափերը՝ երկարություն/լայնություն/բարձրություն ոչ ավել 276/175/190մմ, սառը պարպման հոսանքը ոչ պակաս EN-650A, բևեռնականությունը՝ 0 (հակադարց), չոգտագործված:	4	33600	134400
	Փողրակ 25մմ/20մ. երկարությամբ՝ ներսից ռետինե հիդրոմեկուսիչ շերտով, միացման ալյումինե գլխիկներով, ոչ պակաս 16Մթ/ճնշման, 2017թ-ի արտադրության, նախատեսված հրդեհաշիջման համար	1	29500	29500

	Հրշեջ փողակ կոմբինացված 25մմ	1	20000	20000
Իսուզու ԱՍ-30	Անվադողերի փոխարինում - 11,00R20 անվախցով, պահպանաշերտի գծանկարը՝ ճանապարհային, կառուցվածքը՝ ռադիալ (Radial), շերտայնությունը՝ PR16, բեռնվածության ինդեքսը՝ 150/146 (3350/3000 կգ.), սահմանելի արագության ինդեքսը՝ K (110կմ/ժ) , արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2016թ., չօգտագործված:	10	115000	1150000
	Անվադողերի փոխարինում - 530/70-533 (1300x530-533) անվախցով, պահպանաշերտի գծանկարը՝ բարձր անցողության, կառուցվածքը՝ դիագոնալ (Diagonal), շերտայնությունը՝ PR12, բեռնվածության ինդեքսը՝ 156 (4000 կգ.), սահմանելի արագության ինդեքսը՝ F (80/կմ/ժ) , արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2016թ., չօգտագործված:	6	198000	1188000
	Կուտակիչ մարտկոցների փոխարինում - 6US-140Ա/ժամ անվանական ունակությամբ, չափերը՝ երկարություն/լայնություն/բարձրություն ոչ ավել 513/189/223մմ, սառը պարպման հոսանքը ոչ պակաս EN-900A, բևեռնականությունը՝ 3 կամ 4, չոգտագործված:	4	64000	256000
	Փողակ 65մմ/ 30մ-անոց՝ներսից ռետինե հիդրոմեկուսիչ շերտով, միացման ալյումինե գլխիկներով, ոչ պակաս 16Մթ/ճնշման, 2017թ-ի արտադրության, նախատեսված հրդեհաշիջման համար	4	60000	240000
			ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ՝	73 729 600

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն

ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900011017952

ՀՎՀՀ 00153247

Աշխատակազմի ղեկավար

Գ. Հայրապետյան

/ստորագրություն/Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Լավ Ընկեր» ՍՊԸ

ք. Կապան, Շահումյան 19/40

«Անելիք բանկ» ՓԲԸ

Հ/Հ11800072752900

ՀՎՀՀ 09414681

Տնօրեն՝

Վ.Համբարձումյան

/ստորագրություն/Կ.Տ

Հավելված N 2
« » 20 թ. կնքված
N ԳՀԾՁԲ-ԱԻՆ-17/18-1 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111130/8	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	73 729 600	73 729 600

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011017952
ՀՎՀՀ 00153247
Աշխատակազմի ղեկավար՝

_____ Գ. Հայրապետյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Լավ Ընկեր» ՍՊԸ
ք. Կապան, Շահումյան 19/40
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ11500745457854
ՀՎՀՀ 09414681
Տնօրեն՝

_____ Վ.Համբարձումյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
«22» 12 2017 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

N ԳՀԾՁԲ-ԱԻՆ-17/18-1

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«22» 12 2017թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

N ԳՀԾՁԲ-ԱԻՆ-17/18-1

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն